ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1955 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Պ. Հարությունյան

ՄԽԻԹԱՐ ԲԵԿԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԹՎԻ ՄԱՍԻՆ

1720-ական թթ. Սեֆևյան պետության քայքայման և անկման շրջանում Արևելյան Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում առաջացան դինված ապստամբություններ, ուղղված ինչպես իրանական, այնպես և թյուրքական նվաճողների դեմ։ Արևելյան Հայաստանում՝ Սիսիանի, Ղափանի և Մեղրու շրջաններում ժողովրդական մասսաների պայքարը իրանական և թյուրքական զավթիչների դեմ գլխավորում էին Դավիթ բեկն ու նրա մերձավոր դինակից Մխիթար բեկը (Մխիթար սպարապետը) Սյունիքի՝ Ղափանի ապստամբության, ինչպես և Դավիթ բեկի և Մխիթար բեկի մասին մանրամասն, բայց հակասական տեղեկություններ է հաղորդում գեղջերին ականատես և ազատագրական շարժմանը մասնակից Ստեփանոս Շահումյանը, որի տվյալների համաձայն Դավիթ բեկը մահացել է 1728 թվականին, իսկ Մխիթարը սպանվել է Խնձորեսկ գյուղում 1730 թվականին։ Սակայն Մխիթար բեկի ռուսական կառավարությանն ուղարկած 1726 թվականի նամակը՝, ինչպես և մի շարք այլ տվյալներ ստիպում են մտածել, որ Դավիթ բեկի մահը տեղի է ունեցել մինչև այդ նամակի ուղարկելը (այսինքն՝ մինչև 1726 թ. մարտ ամիսը), իսկ Մխիթար բեկի Խնձորեսկում գտնվող գերեզմանաքարի վրա եղած արձանագրությունը ցույց է տալիս, որ վերջինիս մահը տեղի է ունեցել 1727 թվականին։

Նախքան այդ արձանագրության մասին խոսելը անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Խնձորեսկում կատարված գեղջերի մասին վկայություններ կան ոչ միայն Ստեփանոս Շահումյանի մոտ, այլև արխիվային վավերագրերում։ Այսպես, օրինակ՝ ռուսական կառավարության պատվիրակ Իվան Կարապետը, որը 1723 թվականի վերջերին Պետրոս 1-ինի հանձնարարությամբ եկել էր Ղարաբաղ՝ թյուրքական և իրանական նվաճողների դեմ ապստամբած հայերին օգնություն ցույց տալու նպատակով, 1724 թվականի հուլիսի 18-ին գրած իր նամակում հայտնում է, որ ինքը գնացել է նաև Ղափան, տեղի հայերին ցույց տվել ռուսական կառավարության ուկազը (հայերին օգնություն ցույց տալու մասին) և Ղափանի հայերը ոչ միայն ուրախությամբ են ընդունել այդ ուկազը, այլև միաբերան իրենց համաձայնությունն են հայտնել լինել թագավորի (Պետրոս 1-ինի) հպատակները։ Այնուհետև իր այդ նամակում Իվան Կարապետը գրում է, թե երբ ինքը Ղափանից վերադառնում էր Ղարաբաղ, ճանապարհին՝ Խնձորեսկ գյուղի մոտ նրա և նրան ուղեկցող ղարաբաղցիների վրա հարձակվում են 200-ից ավելի պարսիկներ (ընդգրում՝ «Քորդեր»)։ Խնձորեսկում բռնկվում է կռիվ Իվան Կարապետին ուղեկցող ղարաբաղցիների և պարսիկների միջև։

[1] Տես Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 3, 1952, էջ 83 — 99։

Ապստամբ զարարազցիներին հաջողվում է ջարդել պարսկական այդ դորա-խմբի գլխավորներին և հաջողությամբ վերադառնալ Զարարազ[1]։ Իվան Կարապետի այս կարևոր վկայությունը Խնձորեսկի մասին վերաբերում է 1724 թվականի դեպքերին և որևէ կոնկրետ պատկերացում չի տալիս, թե ինչ է տեղի ունեցել Խնձորեսկում՝ 1724 թվականից հետո։ Խնձորեսկի մասին կարևոր վկայություններ կան նաև Աբրահամ Կրետացու մոտ[2]։

Այդ մասին մեզ ստույգ տեղեկություններ է տալիս Խնձորեսկում գտնվող Մխիթար բեկի գերեզմանաքարը, որի վրա եղած արձանագրությունը հրատարակվել է Ե. Լալայանի կողմից՝ «Ազգագրական հանդեսում», առաջին անգամ 1898 թվականին, և երկրորդ անգամ՝ 1905 թվականին[3]։

Ե. Լալայանի այս երկու հրատարակությունների մեջ կան իրար հակասող տվյալներ։ 1898 թ. հրատարակած արձանագրության մեջ Մխիթար բեկի մահվան տարեթիվը գրված է ՌՃՀԶ (1176—1727 թ.), իսկ 1905 թվականին Լալայանը, առանց որևէ բացատրության, առաջարկում է 1727 թ. (ՌՃՀԶ)-ի փոխարեն կարդալ ՌՃՀԹ (1730)։ Ե. Լալայանի առաջարկած ՌՃՀԹ (1730) թվականը համընկնում է Ս. Շահումյանի տեղեկություններին և այդ թվականը հակված են ընդունելու պրոֆ. Լեոն և ուրիշները[4]։

1898 թ. հրատարակված արձանագրության մեջ ասված է.

1. Այս է տապան ի հանգիսեան,
2. Իջեալ մարմնով ի գերեզման
3. Սայ Մխիթար մեծ անուանեալ
4. Սորա օնէր իշխանութիւն
5. Սա բեմուրատ գնաց ջիվան
6. Որ է երկրէն սայ կանճուվեր։
7. Նահատակուեցաւ ՌՃՀԶ[5]։

Երկրորդ հրատարակության մեջ (1905) առաջին տեղում «ի հանգիսեան» բառի փոխարեն գրված է «ի հանդստեան», իսկ 7-րդ տողում՝ «նահատակուեցաւ ՌՃՀԹ»[6]։ Հրատարակելով գերեզմանաքարի վրա եղած արձանագրությունը, Ե. Լալայանը լռության է մատնել և ոչ մի խոսք չի ասել այդ գերեզմանաքարի վրա եղած քանդակների մասին, որոնք նույնպես կարևոր նշանակություն ունեն մեր պատմության որոշ հարցերի լուսաբանման համար։

Դեռևս 1936 թվականին՝ Երևանի Պետական համալսարանի ուսանողական էքսպեդիցիան, որի մեջ եղել ենք նաև մենք, տեղում արտագրեց այդ արձանագրությունը, որը հետևյալն է.

---

[1] Архив Внешней политики России (ВПР), ф. Сношения России с Арменией, 1739, № 2, л. 64—65.

[2] Տես Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատրշահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 74—75։

[3] «Ազգագրական հանդես», գիրք դ., Թիֆլիս, 1898, էջ 35, գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 197։

[4] Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, 1946, էջ 698, տես նաև Ա. Միրզոյան, Մխիթար բեկի կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 8, 1952, էջ 98։

[5] «Ազգագրական հանդես», «Զանգեզուրի գավառ», 1898, էջ 35։

[6] «Ազգագրական հանդես», գիրք 12-րդ, Թիֆլիս, 1905, էջ 197։

«Այս է տապան ի հանգիստեան
Իջավ մարմնով ի գերեզման.
Սայ Մխիթար մեծ անուվան.
Որա օնէր իշխանութեան
Սայ բեմուրատ գնաց ջիվան,
Որ է երկրէն սայ կանճուվէր»։



Նկ. 1. Մխիթար բեկի տապանաքարի հարավային կողի վրա փորագրված արձանագրությունը։

ԱՅԱՏՏԱՂ ¦ԻՀԱԳԻՍԵԱՆ¦ԻՋԱՎ ՄԱՐՄՆՈՎ
ԻԳԵՐԵԶՄԱՆ¦ՍԱՅՄԽԻԹԱՐ¦ՄԵԾԱՆՈՒՎԱՆ
ՍՈՐԱ ՕՆԷՐ¦ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ¦ՍԱՅԲԷՄՈՒՐԱՏ
ԳՆԱՑ ՋԻՎԱՆ¦ՈՐԷԵՐԿՐԷՆ¦ՍԱՅԿԱՃՈՒՎԷՐ¦

Գերեզմանաքարի արևմտյան մասում (ոտքերի կողմը) գրված էր «Նահատակեցան թվ. ՌՃՀԶ»։ Այս գերեզմանաքարից ոչ շատ հեռու գտնվող մի այլ տապանաքարի վրա գրված է «ՌՃՁՀ»։

Մխիթար բեկի տապանաքարի վրա, հիշյալ արձանագրությունից բացի, քանդակված են. 1) Երեք ձիավոր մարդիկ, առանց գլխարկի. վերջին ձիավորը ձեռքին ունի սուր, մեջտեղի ձիավորը ձեռքին ունի բռնած հրացան, իսկ առաջին ձիավորը՝ նիզակ։ 2) Մի փոքր էլ ավելի առաջ քանդակված են ևս երկու մարդ (փաթաթաձև գլխարկներով) կանգնած, որոնցից մեկը մի ձեռքում ունի հրացան, իսկ մյուսում՝ ծաղիկ, երկրորդ մարդն

ունի ձեռքին խաչ և հասկ։ 3) Այս երեք ձիավորների և կանգնած երկու մարդկանց արանքում քանդակված է մի օձ. առաջին ձիավորի նիզակի ծայրը ուղղված է դեպի օձի գլուխը։

• Դժվար է որոշակի ասել, թե իրենցից ինչ են ներկայացնում այդ

Նկ. 2. Նույն տապանաքարի արևմտյան կողի վրա փորագրված է Մխիթար բեկի մահվան տարեթիվը հետևյալ ձևով՝

ՌՃՀԶ

քանդակները. մի բան կասկածից դուրս է, որ դրանք արձանագրության հետ միասին արտացոլում են ժամանակի դեպքերը։

Այսպիսով, այս տվյալները վկայում են, որ Մխիթար բեկի մահը տեղի է ունեցել 1727 թվականին։ Այդ թվականը, ինչպես ասվեց, արձանագրված է ոչ միայն Մխիթարի տապանաքարի արևմտյան մասում (ՌՃՀԶ), այլև նրան մոտ գտնվող գերեզմանաքարի վրա («ՌՃՀԶ»), որը նույնպես վկայում է, որ Մխիթարի մահը (սպանությունը), իրոք, տեղի է ունեցել 1727 թվականին։ Կարելի է ենթադրել, որ Մխիթարի հետ սպանվել են նաև ուրիշները. թերևս այդ պատճառով էլ գերեզմանաքարի վրա (արևմտյան մասում) գրված է «Նահատակեցան» և ոչ թե «Նահատակեցաւ։